

## ԶՈՒԱՐՃԱԿԻՑ

ԲԱՆԱՏԵՂԹՈՒԹՅՈՒՆ

## Խ Փ Ն Փ Ո Ւ Շ

ՏԱՐԱԺԱՄ ԶՐԱԻԵԱԼ



Եղերք

Զիարդ, ոչ եւս է Քընքուշ . . .  
Ոչ եւս կատուն մեր անուշ . . .  
Մեռաւ փափկիկն այն սիրուն  
Խնդ եւ դորով մեր պարուն . . .  
Յօլեցէք աչք արտասուք,  
Ուլբոց սուք վայս եւ եղուկ .  
Մեռաւ որ զմեղ յիւրն ի խաղ  
Չարժէր յակձիռ եւ ծիծաղ .  
Մեռաւ ում շուրջ ըլնովաւ  
Ի ջամբ տայաք սիրոյ ցաւ,  
Ընդ պատառիկն իւր պարէն  
Իւր լըլկանաց փոխարէն .  
Յօլեցէք աչք արտասուք,  
Յողբոց ի վայս եւ եղուկ :  
Բարէ, քանի սուգ թախիծ  
Պատէ զերեսս արդ խընդից .  
Զիարդ արխուր տարուրէր  
Հայիմք յիրեար այր յընկեր .  
Աւաղանաց ցաւագին  
Թեւակցելով ցողագին .  
Եւ ո՞ ի մէջ գուժարեր .  
Եղուկ, ո՞ այլ քան աչք մեր .  
Մահուն ի ձայն շուրթն ամէն  
Յաւովք ողբոց դողդոջէն .  
Զիարդ մեռաւ մեր Քընքուշ  
Մեր խաղ ձապուկ եւ քընքուշ .  
Զիարդ շիջան այն աչկունք,  
Պաղին անդամք երագունք .  
Զիարդ մեռաւ մեր Քընքուշ .  
Զիարդ անյանցն եւ ըզդոյշ :  
Յօլեցէք աչք արտասուք,  
Յօլէք արխուր եւ ի սուգ :  
Մեռաւ . . . ո՞չ ո՞ գենդ այս  
1 մէնջ բընաւ իսկ յերկայս .  
Աւաղ, ո՞ աայր մեղ ի խէթ  
Դէռ տատանել վէտ ի վէտ .  
Մինչ արդ եւ ոչ մի նըշնար  
Յ ուսոյն մընաց մըխիթար,  
Որ ընդ երկուղ եւ խրախոյս  
Դեղերիցեմք բարեյոյս .

Ո՞չ, երբէք խէթք եւ վարանք  
Վըշտաց ոչ դոյզն են սիրովանք .  
Են են նոցոն իսկ ծըփմանց  
Սիւք հեղաշարժ քատըրութեանց,  
Որ մինչ յերեր կոծի լասա  
Ըլնէն սըրակց յառագասա .  
Եղուկ ի գէմս ուր վերջն  
Յուսոյ նըշոյլք ոչ շըրջն .  
Եղուկ այսից մահակիր  
Յոր գալիութիւն առնու ծիր .  
Եղուկ որ զլէր իւր կորոյս  
Եւ ընդ նմին զամէն յոյս . . .  
Յօլեցէք աչք արտասուք  
Յօլէք սըրախ յիմ պասուք : —  
Յորժամ ի նուագ զառաջն  
Ընհա տեսաք տըրամագին  
Աշկունս ի շուրջ կողկողել  
Եւ անջօր տուան իւր ձըգել .  
Եւ զօրն ողջոյն մենասէր  
Ատէլ ըզկինդ եւ ըզկեր .  
Կախազգացիկ իբր յայն գութ  
Գուժեաց ամէն սըրակց բօթ .  
Զի սիրելոյն ի կորուստ  
Հըմայք չար գոն յամենուսա . . .  
Զամէն ըզուկ եւ ըզժամ  
Կըմին խիթալ գաւաճան .  
Խընամք եւ հոգ սիրավիր  
Ի զուր հեղան եւ ի ցիր .  
Մինչ ըզնովաւ սեաւ թեւեր  
Մահուն սըրփեալ տարածէր :  
Յօլեցէք աչք արտասուք .  
Յօլէք արխուր եւ ի սուգ :  
Վերջն եհաս սեաւ գիշեր .  
Եւ առ ըւսով կացեալ մեր .  
Կըշմարէաք տըրտմագոյն  
Ըզտագնապել եղիթլոյն .  
Կա զիրկոցեալ զիւր աչեր  
Ըզմեք տըրխուրս արծարծէր .  
Եւ հեղաձայն ի մշակւն  
Հայցելով իմն օգնութիւն

Յանկարծ յանկարծ ընդուստնոյր  
Հանդարտացեալ մերթ ուռնոյր .  
Թաթիկ շարժէր , եւ երկայն  
Երբէք երբէք թողոյր ձայն .  
Մարտուռ յանդամնըն տագնապ  
Վառէր կոծէր յետին տապ .  
Ո՛հ , եւ ընդ ում ոդորէր  
Ժանտին կացեալ առընթեր .  
Որչափ յիւրմէ Ճիդն հեղոյր  
Մնայր եւ յուժոյն այն թափուր .  
Եւ բուռն եղեալ դիմագարձ  
Ցոգւոյն նահանջ յետագարձ  
Եղուկ , այնչափ առմատչէր  
Խորին վրհին հուպ եղեր :  
Ո՛հ զի եւս այլ . . . մինայր մահ  
Ու անխօս ոգւոց սակ եւ ահ .  
Ոչ եղելոյն հարեալ Ճիչ  
Ըզմիրան անգութ շարժեաց ինչ .  
Ոչ ի բարուցն աղուենի  
Պատկառեցաւ լըրբենի .  
Յօրիորդին ոչ ի գեղ ,  
Ոչ ի կամար լանջագեղ ,  
Ոչ յանդամոց լըրութիւն ,  
Մորթոյն յողորկ փափկութիւն ,  
Ոչ շերա ի շերա ժապաւէն  
Ցուս եւ ճակատ նըկարէն ,  
Ոչ իսկ յացաց գեղանւոյն  
Ցոր բիր լիւզեր լուսագոյն . . .  
Եւ ոչ յայուշափ իղձ սըրտից  
Ոչ յարտասուաց ինչ թափիծ ,  
Ոչ ի վայրից սըրբութիւն  
Ընկրկեցաւ յողդողդուն ,  
Ո՛հ , զայս նախկին՝ քայլ ժըպիրհ  
Եմոյծ անդ մահ մըշտանիրհ . . .  
Եհաս . . . եհար . — Ճիչ երարձ . . .  
Արացաւ եւ շունչն . . . ահ անդարձ :  
Անդարձ այս , անդարձ միշտ  
Անդարձ յաղէտս եւ ի վիշտ .  
Անդարձ լըքեալն ի կայեան  
Եւ ի խընծիղ բերկրութեան .  
Ոչ եւս այլ բիբըն այն փայլուն  
Ընդարձակին ի լուսոյն .  
Ոչ եւս յերագն իւր ի վազ  
Գըծեսցին հետք իւր յաւազ .  
Ոչ եւս այլ գոռ յասպարէս  
Իջցէ նդ սոսի հէնսն ի վէս .  
Եւ կամ յընդոսան իւր առոյդ  
Տառոց սաղարթք տան շըշուկ .  
Ոչ եւս ըլնա արբանեակ  
Տեսուք ըզհետ մեր արձակ  
Ծուրջ գալ ի ուահ պարտիղին  
Ի գոյոյթ կամ տուտն ի գետին .  
Ոչ եւս ի ժամ մեր ճաշուն  
Ըզմեւք պարէ ոստոստուն ,  
Եւ ի քըծիսն իւր քընքուշ  
Ըզոքորթէ փաղաքուշ .  
Ոչ եւս ուլն յեց ի թաթիկ  
Կընջէ ի բարձ եւ ի գիրկ .  
Եւ ի հեշտից անդ յանուրջ  
Ըզմայլեսցի թաթաւուշ .

Կամ ընդ սիրոյն գըգուանօք  
Հանցէ խորդիւնս առ յողոք .  
Ըզհեշտաշարժն իւր բըբիկ  
Ծուրջ նազելով բացիսբիկ .  
Ու ու ու լուիցուք այլ ըզձայն  
Ու մեք , եւ ու յաւիտեանք . . .  
Ցողեցէք աչք արտասուք  
Ի տըլիրութիւն եւ ի սուգ :

Այլ սակայն ինքն յո՞ն եդ գէմ  
Զի ոչ գառնայ արդ ընդդէմ .  
Արդեօք աշկունք նորին սուր  
Տեսին աշխարհ մ' անտըխուր .  
Զի այդպէս փոյթ առ յերկրէս  
Այլուր սրացան անձկապէս .  
Ո՞ւր արդ նորին օթէ շունչ  
Արդեօք դարձեալ տայ մըրմունջ .  
Երջանկագոյն եդիտ վայր  
Թէ վիհ անունջ եւ անծայր ,  
Ի նախասկիզբն խանձարուրս  
Ցոչէութեան անցեալ դուրս .  
Ցողեցէն աչք արտասուք ,  
Եթէ նանիր գնայցէ սուգ :

Կանիր , աւաղ , մինչ ուրեք  
Ոչ նա լըսէ մեղ երբէք .  
Պատնէշ ընդ նա եւ ընդ մեղ  
Անէութիւն կայ անեզր .  
Անդուստ սա մեղ փախըստեայ  
Ճեպով ի նոյն ծոց գառնայ .  
Նըմանահոս ընդ ալիս  
Կամուրջ արկեալ զըունչն յաստիս  
Ինքն ուղեւոր ինք ուղի  
Անց եւ սուզաւ իւր տեղի ,  
Զի քըութիւն զիւրն ըզհետ  
Թափառելով միահետ ,  
Եղջ անդորով ըզնորայն :  
Ծունչն եւ ըզհետս ընդունայն :  
Ցողեցէն աչք սիրելեաց  
Մի ի նորուն մինալ դարձ : . . .

Բայց թէ եւ չես արդ , Քընքուշ .  
Եւ քոյդ հեղաւ անձուկ ոյժ .  
Այլ ոչէիդ փոխանակ  
Կայ անիրան յիշատակ .  
Այլ եւ գու զայլոց հետ  
Ըզնոյն կոխեալ արահետ  
Ցանդիտութեան շունչդ յափունս  
Յերեր անբիբ տաս աշկունս ,  
Անյոյս այլ ևս յայս երկիր  
Թերի տեղույդ գալ ի միր .  
Սակայն ո՞չ շատ քեզ այս շուք  
Հոմասեռից նախանձուկ ,  
Ունել անուն յոյր ի կոչ  
Ծագել պատկեր ինչ յոգուշ .  
Եւ թէ շիշեալ մի կայծիկ  
Ջըգել զըստուեր իւր փափկիկ :

6 Օգոստոս :